# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի), մայիսի 8-ից 10-ը, 2023 թ.

4. **Հրավիրող կողմը.**
   Արաբական Միացյալ Էմիրությունների արդյունաբերության զարգացման խորհրդի փոխնախագահ, Արտաքին առևտրի պետնախարար

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն Ամենամյա ներդրումային համաժողովին «AIM 2023»

6. **Քննարկված թեմաները.**

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միջոցառմանը մասնակցում էին տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, նախարարներ, մասնավոր հատվածի ներկայացուցիչներ և այլ մասնակիցներ՝ 174 երկրից:

Համաժողովը մասնակից երկրներին հնարավորություն է տալիս անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնել իրենց ներդրումային հնարավորությունների և տնտեսական պայմանների մասին, կատարել ներդրումային շնորհանդեսներ և պլանավորել փակ կլոր սեղաններ՝ նպատակային ներդրողների մասնակցությամբ:

Ելույթների ընթացքում բանախոսներն ընդգծեցին հանդուրժողականության դերը տարբեր սոցիալական, կրոնական և էթնիկ խմբերի տեսանկյունից, ինչպես նաև կառավարությունների կողմից վարվող քաղաքականությունը՝ սոցիալական համակեցության արդյունավետ էկոհամակարգի ստեղծման գործում, որն էլ իր հերթին կարող է նպաստել ներդրումների ծավալին:

Արաբական Միացյալ Էմիրություններում կայացած Ամենամյա ներդրումային համաժողովի «AIM 2023» շրջանակում մասնակցել եմ «Հանդուրժողականության դերը՝ ներդրումների և բարգավաճման գործընթացում» թեմայով քննարկմանը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Կարևորելով սոցիալական պաշտպանության ոլորտում հանդուրժողականության և համակեցության դերն ու այս ուղղությամբ Արաբական Միացյալ Էմիրությունների լավագույն փորձի ուսումնասիրությունը՝ 2023 թ. մայիսի 10-ին Արաբական Միացյալ Էմիրություններում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Արաբական Միացյալ Էմիրությունների հանդուրժողականության և համակեցության նախարարության միջև» փոխըմբռնման հուշագիրը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղել ջանքերը՝ սոցիալական տարբեր խմբերին (երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և բռնության ենթարկված անձինք, աշխատանքային միգրանտներ և այլն) ուղղված աշխատանքներում, ինչպես նաև կրթական համակարգում հանդուրժողականության ու մարդկային արժեքների ամրապնդման և մի շարք այլ ուղղություններով:

Քննարկվել է նաև համատեղ աշխատանքային հանձնաժողովի (կոմիտե) ձևավորման հարցը, որը նպատակ ունի մշակել և իրականացնել երկկողմ շահերից բխող ծրագրեր:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Առաջարկվում է քայլեր ձեռնարկել համագործակցությունն ընդլայնելու ուղղությամբ՝ Արաբական Միացյալ Էմիրությունների հանդուրժողականության և համակեցության նախարար Շեյխ Նահյան Մուբարակ ալ Նահյանի

*«Հանդուրժողականության գրքալ այյանս»* ստեղծելու նախաձեռնության համատեքստում:

**10. Ստորագրությունը, ամսաթիվը:**

5/15/2023

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

15.05.2023

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ կառավարության 03.05.2023թ-ի 477-Ա որոշում***

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
***ՀՀ ԱՍՀՆ նախարար՝ Նարեկ Մկրտչյան***
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը-***Արաբական միացյալ էմիրություններ՝ Աբու Դաբի***

5. Գործուղման ժամկետները ***08.05.2023թ-10.05.2023թ.***

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
**Ճանապարհածախս և գիշերավարձ**

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ***ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | ***Մկրտչյան Նարեկ*** | ***Ընդամենը (հազ. դրամ)*** |
|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիածառայության տեսակը (**էկոնոմ դաս,** բիզնես դաս) | - | - |
| | Ավիատոմսի և ավիատոմսի ամրագրման արժեքը (դրամ) | - | - |
| Գիշերա-վարձի հաշվարկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | - | - |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | - | - |
| | Օրերի քանակը | - | - |
| | Ընդամենը հաշվարկվել է (դրամ) | - | - |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (դոլար) | 145 | - |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 56159.95 | - |
| | Օրերի քանակը | 3 | - |
| | Ընդամենը վճարվել է (դրամ) | 168479.85 | **168.48** |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային Նմուշառումների վճար | - | - |
| | Մուտքի արտոնագրի վճար | - | - |
| | Այլ ծախսեր Ավստրիայի դեսպանատուն դիմելու սպասարկման վճար | | |
| | Ռոսգոսստրախ Արմենիա ապահովագրության վճար | | |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | | **168.48** |

***օրապահիկի հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի «04» «մայիսի» 2023 թվականի 1 դոլարին համարժեք 387.31 ՀՀ դրամի չափը**

5/15/2023

X

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Signed by: MURADYAN SAMVEL 1104630109

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

15.05.2023 թ.